Եւրոպայի մէջ եղած ուսանողաց թիւը, և նոյնպէս հոն գրուած ըլլայ, թէ իւրաքանչիւր ուսանող ինչ մասնաճիւղի կը պարապի։ Ցուցակագիրը

**ԲԱՆԱՍԷՐ**

ընդհանրապէս հայ ուսանողութեան վրայէն շատ խնկալէտ գաղափարներ կը փչէ. տակայն սա այժմ հայ ազգին իրրեւ աջակից, անձնանուէր օգտակար տարր՝ մենք կը գտնենք գերմանական հայ ուսանողները. մենք կը փափաքինք որ անոնց լուրջ ուղղութիւնը ու գործունէութիւնը յուզէ միւս զանազան երկիր ապրողներու ուսանողներու անձնուիրութիւնը, և զանոնք միութեան և ազգին յառաջդիմութեան գործին մէջ աշխատելու նախանձով մը։ Ցուցակագիրը հրաւէր կը կարդայ որ Եւրոպա մէջ ուսանողական լուծուած միութիւնը վերականգնի ու գործէ. գովելի հրաւէր և ցանկալի է որ լսուի այդ ձայնի ներդաշնակութիւնը։ — Բանասէր իր այս (թիւ 2) թերթով կը վերջացնէ Քաղկեդոնեան ժողովի պատմութիւնը, զոր քննական և աստուածաբանական երկարապատում յօդուած մ'է, նոյն ժողովի ջատագով և տակ աստուածաբաններն՝ այդ գրութեան մէջ կը գտնեն քեր ու դէմ վարդապետութիւններ։ — Բանասէր Հանդուցեալ Նոյեմբեր Կարիէրի հոլանդերէն գերեզմանին վրայ արտասանուած երկու ճառերն հրատարակած է մին գաղղիերէն միւսը հայերէն։ "Մամուլի բաժինը„ վերնագրի տակ, ամսաթերթը գրքերու և թերթերու վրայ համառօտ տեղեկութիւններ կու տայ. մենք գիտել կու տանք Բանասէրի յարգ. խմբագրին, որ թերթի մը ազին է ազգային գրական և պատմական նորութեանց վրայ անդրադառնալը. դուք ջանացէք այդ բաժինը ընդարձակելու, այսպէսով եղէք որ օգտակար կ'ըլլաք ոչ միայն Բանասէրի այլ Ձեր ամբողջ ընթերցողաց։ Ուրախ ենք որ դուք այժմ ըմբռնած էք որ չոր մասնագիտական թերթ մը մեր ազգին համար չէ և նոյն ուղղութեամբ ընթանալով գրական վարձատրութեան ապահովն անհրաժեշտ և անտեղի պահանջ մ'է։ Պէտք ենք խոստովանիլ որ տակաւին Բանասէրը հայկեպով չուզեր յեղափոխել իր նախկին չոր ու ցամաք ծրագիրը. բայց քանի որ նա բարեշրջման ուղին գտած է, յառաջդիմութիւնը ապահով է, վասն զի Բանասէրի յարգ. խմբագրէն յամառ և անընկճելի ջանքը չի պակսիր. և ջանքն է որ ամէն բան կ'ընկճէ... ամենայնի կ'իշխէ, ամէն դժուարութեանց կը յաղթէ,

Շարժում. — Արտասահմանի մէջ տակաւ չեն հայ լրագիրներ, որոնք ոչ անծանօթ պատճառներով մեր այս բաժնին մէջ չենք կարող մոռցընել.

**ՇԱՐԺՈՒՄ**

մենք այս անգամ այդ լրագիրներէն միայն Շարժումի "Ազգային ցեցերը„ վերնագրով յօդուածը ուշադրութեան արժանի կը գտնենք։ Այդ գրութեամբ լրագիրը անէծք կը թափէ այն ամէն կեղծուպատիր արարածներու գլխուն, որոնք փարիսեցիական և խմաստակ խոհեմութեան վերարկուով, կ'աշխատին տապալել ազգին յառաջդիմութեան գրական և կենսական կազդուրիչ գործը։ Մեր չարաստանջ հասարակութիւնը փարձուած նահատակ մ'է, հպատակ անողորմ հարուածներու, բայց այդ հարուածները այն ատեն միայն մեր շէնքը դղրդեցուցած են, փլցնելու վտանգի մէջ դրած, երբ թշնամին մեր մէջէն ծնած է, և ողորմելի ցեցերու պէս կերեր է ազգին պաշտելի մարմնոյն ու անյագաբար ծծեր է մեր արիւնը. այդ ցեցերը մեր մէջէն անպակաս են միշտ ու. ուղղամիտ լրագրութիւնը, հասարակութեան երջանկութեան և անոր անդորր կենաց վրէժխնդիր գրչի մշակները զինուած են այդ տխմար ցեցերու դէմ. ցեցեր որ տունկի պէս կը բուսնին և ազգին չարաւներուն մէջ կը լողան։ Կրկին են մեր ոսոխներն, հակառակորդը և ներքին այդ ցեցերը. կը գրէ լրագիրը.

"Հայ ժողովուրդը անանկ գրութեան մը մէջ է որ, ստիպուած է իր ուժերը կրկնապատկել, կռուիլ երկուքին դէմ ալ հաւասարապէս. բոլորովին չի տուժելու համար ուշ կամ կանուխ„։

Մեզի համար սուրբ է այդ կռիւը. լաւ է քանի մը անպարծ, գոռոզ, անձին շահը ու փառքը մտածող, ամարդի ցեցերուն կնճիթը ջախջախել քան թէ թմրած մնալ որ անոնք ապատակին հասարակութեան վրայ, և վամպիրի արկրամոլութեամբ հասարակութեան ուժը ծծեն ու սպառեն. չուզենք ուշ բանալ այն ատեն երբ ուժաթափ, թալկացած ընկած կործանած է ամբողջ հայ զանգուածին նուիրական շէնքը։ Արթնանանք, կարող ըլլանք որոշել բարին չարէն, փառասէրը հասարակասէրէն, օրինական ըմբոստը՝ կեղծաւոր բարեկամներէն։ Ճակատագրի թոյներուն միամտօրէն կուրծք չի բանանք. խորամանկ ըլլանք և ըմբռնենք մեր ներքին թշնամիներուն կործանիչ որոգայթներն, և աշխատինք փրկել հասարակութեան մարմինը այդ ներքին ցեցերու ճիրաններէն, դժուար չէ յաղթանակը, թող՝ չարժին գրչի զէնքերը, և որոտան հեղինակաւոր ձայները...

Հ. Ս. ԵՐԵՄ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


ԵՐԵՄ. Հ. Ս. — Մի՛ վհատիր . . . 153
Ա. ԳՈՑԻԹՈՑ. — Նիրոն. Թրգմ. Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ . . . . . . . 160
ՓԱՓԱԶԵԱՆ Վ. — Հայ-բոշաներ . . . 165
H. F. B. LYNCH. — Էջմիածին. Թարգմ. ՍԱՐԵԱՆ Հ. Ս. . . . . . . 170
Գ. Հ. Ա. — Կարին և երկրաշարժը . . 174
ՍԱՐԵԱՆ Հ. Ս. — Տարփինականութիւն . . 181
ՉՐԱՔԵԱՆ Հ. Ք. — Ք. Պատկանեան և Ն. Գորոյեանց . . . . . . 186
ՍԱՐԵԱՆ Հ. Ս. — Հայկական հին սովորութիւն մը . . . . . . 189
Մ. ՇՈՎՐԵԱՆ. — Մատենագրական . . 192
գիտութիւն Թրգմ. Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ. . 192
ԵՐԵՄ. Հ. Ս. — Հանդէս Հանդիսից. . 197


digitised by A.R.A.R.@